ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 171-Ա/Հ «04» մարտի 2022 թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄԻ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «Մշակութային միջոցառումների իրականացում» և «1056. «Կինեմատոգրաֆիայի ծրագիր» ծրագրի «Աջակցություն կինոարվեստին» միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նպաստ տրամադրելու գործընթացը կանոնակարգելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հաստատել «Միջազգային միջոցառումներին և նախագծերին մասնակցելու համար անհատ կատարողներին, ստեղծագործողներին և մշակույթի գործիչներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված նպաստ տրամադրելու կարգը և չափորոշիչները՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների, ինչպես նաև նպաստ ստանալու համար դիմումի, հաշվետվության, եզրակացության և պայմանագրի ձևերը՝ համաձայն N 3, N 4, N 5, N 6 հավելվածների:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

2/4/2022

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված N 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի փետրվարի 4 -ի N 171-Ա/2 հրամանի

ԿԱՐԳ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են օտարերկրյա պետություններում միջազգային միջոցառումներին և նախագծերին (այսուհետ՝ Միջոցառում) մասնակցելու համար անհատ կատարողներին, ստեղծագործողներին և մշակույթի գործիչներին (այսուհետ՝ Մասնակից) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «Մշակութային միջոցառումների իրականացում» և «1056. «Կինեմատոգրաֆիայի ծրագիր» ծրագրի «Աջակցություն կինոարվեստին» միջոցառումներով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից նպաստ (այսուհետ՝ Նպաստ) տրամադրելու պայմանները:

2. Միջազգային միջոցառումներին և նախագծերին մասնակցելու համար Նպաստ կարող է տրվել.

1) թատերարվեստի աջակցության շրջանակներում միջազգային թատերական նախագծերին անհատ արվեստագետների մասնակցության նպատակով,

2) երաժշտարվեստի աջակցության շրջանակներում միջազգային երաժշտական նախագծերին անհատ արվեստագետների մասնակցության նպատակով,

3) պարարվեստի աջակցության շրջանակներում միջազգային պարի նախագծերին անհատ կատարողների, արվեստագետների մասնակցության նպատակով,

4) կերպարվեստի աջակցության շրջանակներում միջազգային ցուցահանդեսներին անհատ արվեստագետների մասնակցության նպատակով,

5) կինոարվեստի աջակցության շրջանակներում միջազգային կինոփառատոներին, կինոշուկաներին և կինոծրագրերին անհատ ստեղծագործողների և մշակույթի գործիչների մասնակցության նպատակով,

6) մշակութային կրթության աջակցության շրջանակներում միջազգային մանկապատանեկան և երիտասարդական միջոցառումներին և նախագծերին շնորհալի պատանիների և երիտասարդների մասնակցության նպատակով:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված նպատակներով Նպաստը կարող է տրամադրվել որպես փոխհատուցում՝ ավիատոմս(եր)ի գնման և/կամ գիշերակացի ծախսերի համար:

4. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված միջոցառումներին մասնակցելու նպատակով Նպաստ ստանալու համար մասնակիցը՝ մեկնելուց առնվազն մեկ ամիս առաջ Նախարարությանը ներկայացնում է հայտ (այսուհետև՝ Հայտ)՝ կազմված հետևյալ փաստաթղթերից՝

1) դիմում (Ձև 1),

2) անձը հաստատող փաստաթղթի պատճեն(եր),

3) անհատ կատարողին (ստեղծագործողին կամ մշակույթի գործչին) միջոցառմանը կամ նախագծին մասնակցելու հրավեր (այսուհետ՝ Հրավեր), որում պետք է հստակ նշված լինի մասնակցության նպատակը, ընդ որում, միջոցառմանը կամ նախագծին մասնակցելու հրավերը նախարարությանն ուղված լինելու դեպքում Նախարարությունն իրավասու է ինքնուրույն որոշելու մասնակիցներին,

4) սույն կետի 3-րդ ենթակետի Հրավերի պահանջը չի տարածվում առանձին միջոցառումների կամ ծրագրերի (կինոշուկաներ, ցուցահանդեսներ (էքսպո) և միջազգային համագործակցության ամրապնդման այլ ծրագրեր) մասնակցության հայտերին, որոնց դեպքում հայտատուն պետք է ներկայացնի տվյալ միջոցառմանը կամ ծրագրին մասնակցության նպատակների և արդյունավետության վերաբերյալ հիմնավորումները,

5) Հրավերի հայերեն թարգմանություն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից որակավորում ստացած թարգմանչի կողմից,

6) տեղեկույթ միջոցառման կամ նախագծի վերաբերյալ (հայերեն),

7) միջոցառմանը կամ նախագծին մասնակցության ծրագիր և, առկայության դեպքում, ներկայացվող աշխատանք(ներ)ի բովանդակային նյութեր,

8) ավիատոմս(եր)ի գնման պահանջի դեպքում ավիափոխադրում իրականացնող կազմակերպության պաշտոնական կայքում հրապարակային օֆերտայով առաջարկվող գնի արտատպված էջը կամ առնվազն երեք կազմակերպությունից իրականացված գնանշման հարցման պատասխանները,

9) գիշերակացի ծախսեր իրականացնելու պահանջի դեպքում համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպության (հյուրանոցի կամ հյուրատան) հրապարակային օֆերտայով առաջարկվող գնի արտատպված էջը կամ նախնական ամրագրումը հավաստող փաստաթուղթ,

10)Հայտատուի հիմնական աշխատավայրի կամ ուսումնական հաստատության ղեկավարի կողմից հավաստում (տեղեկանք գրություն, հրամանի պատճեն և այլն)՝ միջոցառման կամ նախագծի մասնակցության օրերին հայտատուի բացակայության գործատուի թույտվության վերաբերյալ,

11) այլ նյութեր և փաստաթղթեր՝ Հայտը ներկայացնողի ցանկությամբ:

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված Հայտը ստանալուց հետո ոլորտը համակարգող ստորաբաժանումն առնվազն հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է այն (անհրաժեշտության դեպքում դրան մասնակից դարձնելով ոլորտի փորձագետներին) և սույն կարգի 4-րդ կետով պահանջվող նյութերն ու փաստաթղթերը թերի լինելու դեպքում պատրաստում է համապատասխան գրություն Հայտը ներկայացնողին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները, իսկ սույն կարգի 4-րդ կետով պահանջվող նյութերն ու փաստաթղթերը թերի չլինելու կամ թերությունները շտկվելու դեպքում.

1) դրական եզրակացության պարագայում՝ ոլորտը համակարգող ստորաբաժանումը ներկայացված Հայտը բավարարելու և նպաստ տրամադրելու նպատակով նախարարության ոլորտը համակարգող նախարարի տեղակալի հաստատմանն է ներկայացնում Հայտը բավարարելու մասին գրություն՝ ուղղված Հայտը ներկայացնողին, նախապես համաձայնեցնելով ֆինանսաբյուջետային վարչության հետ,

2) Ֆինանսաբյուջետային վարչությունը, Հայտը ներկայացնողին ուղարկվող գրությանը տալիս է համաձայնեցում՝ միջոցառման տվյալ եռամսյակում ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների մնացորդի հաշվառում իրականացնելու համար,

3) բացասական եզրակացության պարագայում՝ ոլորտը համակարգող ստորաբաժանումը ոլորտը համակարգող նախարարի տեղակալի անունից պատրաստում է Հայտը մերժելու մասին համապատասխան գրություն՝ ուղված Հայտը ներկայացնողին:

6. Հայտի բացասական եզրակացության հիմք կարող է հանդիսանալ.

1) Հայտը սույն կարգի 2-րդ կետի պահանջներին չհամապատասխանելը,

2) միջազգային միջոցառումներին և նախագծերին մասնակցելու համար Մասնակցին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված նպաստ տրամադրելու N 2 հավելվածում սահմանված չափորոշիչներին չհամապատասխանելը,

3) սույն կարգի 4-րդ կետով սահմանված ժամկետը չպահպանելը,

4) սույն կարգի 4-րդ կետով պահանջվող նյութերն ու փաստաթղթերը թերի լինելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում չշտկելը,

5) պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների բացակայությունը կամ ոչ բավարար լինելը,

6) վերջին հինգ տարիների ընթացքում հայտատուի կողմից Նախարարության հանդեպ ստանձնած պարտավորությունների թերկատարումը կամ չկատարումը՝ եթե տվյալ պահին վերացված չեն դրանց հետևանքները,

7) ոլորտը համակարգող ստորաբաժանման բացասական եզրակացությունը (անհրաժեշտության դեպքում դրան մասնակից դարձնելով ոլորտի փորձագետներին):

7. Ավիատոմս(եր)ի գնման և/կամ գիշերակացի ծախսերի փոխհատուցում պահանջող Հայտերի դեպքում.

1) Նպաստ ստացող հայտատուն ֆինանսական փոխհատուցման նպատակով Նախարարության հետ պայմանագիր կնքելու համար միջոցառումից վերադառնալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Նախարարություն է ներկայացնում միջոցառմանը մասնակցելու արդյունքների մասին բովանդակային և ֆինանսական հաշվետվությունը՝ համաձայն սույն հրամանի N 4 հավելվածի, որը սահմանված կարգով մակագրվում է ոլորտը համակարգող և հաշվապահական հաշվառման ստորաբաժանումներին,

2) ոլորտը համակարգող և հաշվապահական հաշվառման ստորաբաժանումները սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում և Նախարարության

ֆինանսաբյուջետային վարչությանն են տրամադրում միջոցառմանը մասնակցելու արդյունքների վերաբերյալ դրական կամ բացասական եզրակացություն,

3) Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությունը, ստանալով սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը և միջոցառմանը մասնակցելու արդյունքների վերաբերյալ դրական եզրակացությունները, հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է հայտատուի և Նախարարության միջև կնքվող ֆինանսական փոխհատուցում տրամադրելու մասին պայմանագրի կնքումը, ինչպես նաև ստորագրված պայմանագրի պատճենի, վճարումը հավաստող փաստաթղթերի, հաշվարկային փաստաթղթերի և վճարման հայտի տրամադրումը Նախարարության հաշվապահական հաշվառման վարչությանը,

4) սույն կետի 2-րդ ենթակետում նշված եզրակացությունը բացասական լինելու, ինչպես նաև սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերում թերություններ կամ անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում Նախարարության ոլորտը համակարգող և հաշվապահական հաշվառման վարչությունները, յուրաքանչյուրն իր մասով հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտնում են հայտատուին՝ նշելով պայմանագիր չկնքելու պատճառները,

5) Նախարարության հաշվապահական հաշվառման վարչությունը, սույն կետի 3-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով երկու աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է համապատասխան վճարումները:

8. Սահմանել,որ.

1) ավիատոմս(եր)ի գնման նպատակով Նպաստի չափը որոշելու համար հիմք է հանդիսանում ավիափոխադրում իրականացնող կազմակերպության պաշտոնական կայքում հրապարակային օֆերտայով առաջարկվող գինը կամ առնվազն երեք կազմակերպությունից իրականացված գնանշման հարցումը, ընդ որում՝ ավիատոմս(եր)ի գնման նպատակով Նպաստ կարող է տրվել միայն էկոնոմ դասի ավիատոմսի դեպքում, ինչպես նաև հատուկ դեպքերում ավիատոմսի գումար կարող է տրամադրվել նաև որոշ երաժշտական գործիքների համար,

2) փոխհատուցվող գիշերակացի չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված օտարերկրյա պետություններ գործուղվող աշխատողների գործուղման գիշերավարձի ծախսերի չափը, ընդ որում, փոխհատուցվող գիշերակացի նպատակով փոխհատուցումը կարող է տրամադրվել միայն Հրավերում նշված

միջոցառման սկզբից առավելագույնը մեկ օր առաջ և ավարտից առավելագույնը մեկ օր հետո ամսաթվերի համար,

3) Փոխհատուցումը կարող է տրամադրվել մասնակի՝ համապատասխան վարչությունների կողմից սույն կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերով նշված ուղղություններով:

Հավելված N 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի փետրվարի 4 -ի N 171-Ա/2 հրամանի

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Միջազգային միջոցառումներին մասնակցելու համար անհատ կատարողներին, ստեղծագործներին և մշակույթի գործիչներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված նպաստ ստանալու չափորոշիչներն են.

1) միջազգային մշակութային հեղինակավոր հարթակներում Հայաստանի Հանրապետության վարկանիշի բարձրացման ուղղվածությունը,

2) Միջոցառման նորարարությունը, արդիականությունը, հեռանկարայնությունը,

3) միջազգային հարթակների արդի ստեղծագործական պահանջներին համապատասխանությունը և մասնակցության արդյունավետությունը,

4) միջազգային համագործակցության ընդլայնման և փորձի փոխանակման ուղղվածությունը,

5) մշակութային արտադրանքի տարածման և իրացման գործընթացին պատկանելիությունը,

6) արվեստագետների ստեղծագործական ներուժի խթանումը, ստեղծարար արտադրության զարգացումը,

7) երիտասարդ ստեղծագործողների մասնագիտական կարողությունների զարգացումը,

8) ստեղծագործական գործընթացների զարգացումը, արժևորումը, հանրային գրավչության, ճանաչելիության բարձրացումն ու հայկական մշակույթի հանրահռչակումը,

9) մշակութային ժառանգության արժեքների ճանաչելիության բարձրացումը, արժևորումն ու միջազգային հանրահռչակումը,

10) երեխաների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության բնագավառում անհատի բազմակողմանի ու մտավոր ներուժի զարգացումը:

2. Չեն ֆինանսավորվում կոմերցիոն բնույթի, միջազգային լայն հեղինակություն չունեցող միջոցառումներն ու նախագծերը:

Հավելված N 3
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի փետրվարի 4 -ի N 171-Ա/2 հրամանի

ՁԵՎ

ԴԻՄՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարար

_____ ին

_____-ից

Դիմումատուի* անունը, հայրանունը, ազգանունը

_____

բնակության վայրը

Ծանոթանալով միջազգային միջոցառումներին մասնակցելու համար անհատ կատարողներին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նպաստ տրամադրելու կարգին (այսուհետև՝ կարգ)՝ խնդրում եմ Ձեզ տրամադրել

□ նպաստ, որպես ավիատոմս(եր)ի գնման փոխհատուցում

□ նպաստ, որպես գիշերակացի ծախսեր փոխհատուցում

Միջոցառման անվանումը ----------

Հրավիրող կազմակերպության (4-րդ կետի, 4-րդ ենթակետի դեպքում՝ միջոցառման կամ ծրագրի) անվանումը և կապի տվյալները ----------

Միջոցառման անցկացման վայրը ----------

Միջոցառման սկիզբը և ավարտը ----------

Ուղևորության ուղղությունը (մեկնման և ժամանման քաղաքը) ----------

---

Նախարարության կողմից ավիատոմսի և/կամ գիշերակացի ծախսերի փոխհատուցում ստանալու համար պարտավորվում եմ վերադարձից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնել.

միջոցառմանը մասնակցելու արդյունքների մասին բովանդակային և ֆինանսական հաշվետվությունը՝ համաձայն կարգի N 4 հավելվածի, ինչպես նաև միջազգային միջոցառումներին մասնակցելու համար անհատ կատարողներին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նպաստ տրամադրելու կարգով պահանջվող այլ փաստաթղթերը:

Կից ներկայացնում եմ պահանջվող անձնագրի պատճենը, բանկային տվյալները և պահանջվող այլ փաստաթղթերը:

Դիմող՝ .....

անուն, ազգանուն, ստորագրություն

.... 20 ..... թ.

**Անչափահասների դեպքում դիմումը կարող են ներկայացնել ծնողներից մեկը կամ ուսումնական հաստատությունը:*

Հավելված N 4
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի փետրվարի 4 -ի N 171-Ա/2 հրամանի

ՁԵՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՆԱԽԱԳԾԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____

(անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը և/կամ ուսման վայրը)

_____

(մեկնած երկիրը, մեկնելու և վերադարձի օրը, ամիսը, տարին)

_____

(ուղևորության նպատակը, միջոցառման անվանումը)

_____

_____

(ուղևորության արդյունքները՝ կցելով առնչվող նյութերը)

_____

_____

_____

(այլ տեղեկություններ)

_____

_____

Կից ներկայացնում եմ.

միջոցառմանը մասնակցելու արդյունքների մասին բովանդակային և ֆինանսական հաշվետվությունը, ինչպես նաև միջազգային միջոցառումներին մասնակցելու համար Մասնակցից Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նպաստ տրամադրելու կարգով պահանջվող այլ փաստաթղթերը:

☐ ավիատոմսի ձեռքբերման էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը

☐ հյուրանոցի (հյուրատան) էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը

☐ ավիատոմսի էլեկտրոնային վճարումը հավաստող փաստաթուղթը

☐ հյուրանոցի (հյուրատան) վճարումը հավաստող փաստաթուղթը

☐ էլեկտրոնային ավիատոմսը

☐ նստեցման կտրոնը

☐ անձնագրի պատճենը

☐ միջազգային միջոցառմանը մասնակցելու արդյունքների մասին հաշվետվությունը

☐ լուսանկար(ներ)

☐ տեսանյութ(եր) (առկայության դեպքում)

☐ հավաստագիր

☐ մրցանակ

☐ վկայական

☐ պատվոգիր

☐այլ նյութեր և փաստաթղթեր՝ Մասնակցի ցանկությամբ

☐ հրավիրող կողմից միջոցառման մասնակցությունը հավաստող փաստաթուղթ (տեղեկանք, նամակ) այլ փաստաթղթեր (*նշել*) (բացառությամբ՝ 4-րդ կետի, 4-րդ ենթակետում նշված միջոցառումների կամ ծրագրերի դեպքում)

_____

_____

--- ---

(անուն-ազգանունը) (ստորագրությունը)

.... 20..... թ.

Հավելված N 5
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի փետրվարի 4 -ի N 171-Ա/2 հրամանի
ՁԵՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՆԱԽԱԳԾԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միջազգային միջոցառման կամ նախագծի անվանումը

Մասնակցի անունը, ազգանունը՝

Մասնակցության արդյունքները՝

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

Միջոցառմանը մասնակցելու արդյունքների վերաբերյալ տրվում է
_____ եզրակացություն:
(դրական/բացասական)

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարության
---------- **վարչություն**

«____» «_____» 20__ թ.

Հավելված N 6
ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի փետրվարի 4 -ի N 171-Ա/2 հրամանի
ՁԵՎ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « ____ » _____20..թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղար _____ (ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա), մի կողմից և ----------ը (այսուհետ՝ Նվիրառու) (անձնագիր՝ ---------- տրված՝ ---------- թ.-ին ----------ի կողմից) մյուս կողմից, հիմք ընդունելով կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20_____ թվականի մարտի -ի թիվ հրամանով հաստատված դրույթները, «Հայաստանի Հանրապետության 20-----թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 20____ թվականի դեկտեմբերի ----------ի N ----------Ն որոշմամբ հաստատված ---------- ծրագրի ----------միջոցառման կատարումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով նախատեսվում է նպաստ տրամադրել 20--- թվականի ----------ը ---------- քաղաքում ---------- կազմակերպած «----------» ---------- միջոցառմանը մասնակցելու նպատակով 20_____. թվականի ----------ը Երևան-.----------Երևան ինքնաթիռի գնման և ---------- քաղաքում ---------- օրվա գիշերակացի համար՝ ---------- (տառերով ----------) ՀՀ դրամի (այսուհետ՝ Նպաստի գումար) չափով:

2. ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Նպաստիգումարը տրամադրվում է Նվիրառուին՝ Պայմանագրով նշված բանկային հաշվին՝ դրամական միջոցների փոխանցման միջոցով: Նպաստի գումարի փոխանցումը կատարվում է պայմանագրի կնքման պահից տասը աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Նվիրատուն իրավունքունի՝

3.1.1 Նվիրառուից պահանջել հատուցելու Նպաստի գումարն ընդունելուց հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված իրական վնասը:

3.1.2 Նվիրառուի կողմից ներկայացված հաշվետվության հետ կցվող անհրաժեշտ փաստաթղթերի իսկությունը չհամապատասխանելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

3.2.Նվիրատունպարտավոր է՝

3.1.3 Պայմանագրի 2.1 կետով սահմանված կարգով Նվիրառուին փոխանցել Պայմանագրի 1.1 կետով սահմանվածՆպաստի գումարը:

3.3. Նվիրառուն իրավունք ունի՝

3.1.4 Մինչև Նպաստի գումարն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այս դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված:

3.4. Նվիրառուն պարտավոր է՝

3.4.1 Ընդունել Նպաստի գումարը:

3.4.2 Հատուցելու նպաստի գումարը փոխանցելուց հետո, դրա ընդունելուց հրաժարվելու հետևանքով Նվիրատուին պատճառված իրական վնասը:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Նվիրառուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված փաստաթղթերի իսկություն համար:

4.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

4.3 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

4.4 Պայմանագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

4.5 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՎԻՐԱՏՈՒ	**ՆՎԻՐԱՌՈՒ**
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտինախարարություն ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ ..... ՀՎՀՀ ..... Էլ. փոստ՝ ..... Գլխավոր քարտուղար՝ _____ Կ. Տ.	....Անուն, հայրանուն, ազգանուն ....բնակության վայրը/հաշվառման վայրը .... Անձնագրային տվյալները Բանկ՝..... Հ/Հ..... Էլ.փոստ՝.....